Է.00-02 «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Ալեքսանդր Գեղամի Խաչատրյանի "ՈՒՅՂՈՒՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ՉԻՆԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ (20-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍ – 2010-ԱԿԱՆ ԹԹ.)" թեմայով ատենախոսության վերաբերյալ

Վերջին շրջանում հայ հեղինակների կողմից հրապարակվել են մի շարք հոդվածներ և մենագրություններ, որոնցում բազմաթիվ այլ հարցերի հետ մեկտեղ անդրադարձ է կատարվել նաև Չինաստանի Ժողովրդական Հանրապետության (ՉԺՀ-ի) քաղաքականության ուսումնասիրությանը Սինցզյան-Ույղուրական ինքնավար մարզում: Սակայն պատմական տարբեր փուլերում Չինաստանի արտաքին և ներքին քաղաքականության համատեքստում ույղուրական հիմնախնդրի ուսումնասիրմանը նվիրված ամբողջական հետազոտություն մեզանում դեռևս չի իրականացվել, որով էլ կարևորվում է սույն հետազոտական աշխատանքի ընտրությունը, գիտական նորույթը, ուսումնասիրված խնդրի արդիականությունը :

Ատենախոսը լուսաբանել է ույղուրական էթնոսի անցած ուղին և հան-ույղուրական միջէթնիկ կապերը պատմական ընդգրկուն ժամանակահատվածում՝ 20-րդ դարի կեսից մինչև 21-դարի երկրորդ տասնամյակը, հետազոտել ույղուրական բաղադրիչն ու վերջինիս ուղղակի ազդեցությունը ՉԺՀ-ի արտաքին քաղաքականության վրա, ցույց տվել ույղուրական անջատողականության կապը պանթուրքիստական գաղափարախոսության ու կրոնական ծայրահեղականության, ինչպես նաև միջազգային ահաբեկչական կազմակերպությունների գործունեության հետ, ներկայացրել միջազգային կազմակերպությունների շրջանակներում «ույղուրական խնդրի» նկատմամբ դրսևորվող վերաբերմունքն ու գնահատականները, բացահայտել Թուրքիայի Հանրապետության ուղղակի ներգրավվածությունը "ույղուրական հարցում", ինչպես նաև ույղուրների հանդեպ Պեկինի վարվող քաղաքականության հետ կապված շահարկումները միջազգային հանրության շրջանակներում, հատկապես Արևմուտքի երկրների կողմից, ինչպես նաև ուսումնասիրել Չինաստանի արտաքին քաղաքականության վրա ազդեցություն ունեցող ույղուրական գործոնը թուրք-չինական և հայ-չինական հարաբերությունների համատեքստում ու հեռանկարային տեսանկյունից:

Իր տեսակի մեջ այս եզակի աշխատությունը՝ նպաստելով Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ) չինագիտության համեմատաբար նոր ճյուղի զարգացմանը, որոշակի գիտական ներդրում է հայկական պատմագիտության մեջ, ինչպես նաև Չինաստանի ու հատկապես «ույղուրական հարցի» ուսումնասիրության ոլորտում, որն ուրույն չափով կարող է նպաստել ՉԺՀ-ի և ՀՀ միջև հաստատված բարեկամական հարաբերությունների խորացման գործին:

Ակնհայտ է, որ հեղինակի կողմից Չինաստան կատարված գործուղումները և տարբեր գերատեսչությունների ու փորձագետների հետ արված խորհրդատվական բնույթի քննարկումները խնդրի համակողմանի և խորքային ըմբռնման ու գնահատման տեսանկյունից դրական են ազդել ատենախոսությունում արված հավասարակշռված դատողությունների ու վերլուծությունների վրա:

Ատենախոսին հաջողվել է գիտական ճանաչողության կատեգորիաների, ինչպես նաև պատմահամեմատական և փաստերի բովանդակային ու համակարգային վերլուծության մեթոդների կիրառմամբ, ինչպես նաև տարբեր լեզուներով հարուստ աղբյուրների ու տարաբնույթ գրականության օգտագործմամբ պատշաճ ձևով կատարել հետազոտության շրջանակներում առաջադրված խնդիրները: Հեղինակը դրսևորել է ինքնուրույն գիտահետազոտական աշխատանք իրականացնելու ընդունակություն :

Ընդհանուր առմամբ բարձր գնահատելով ատենախոսությունը, հարկ է նշել, որ ատենախոսության տեքստը զերծ չէ նաև ոչ էական բնույթի թերություններից՝ որոշակի կրկնություններից և ավելորդ պարզաբանումներից, սակայն դրանք չեն անդրադառնում ատենախոսության ընդհանուր բարձր գնահատականի վրա:

Ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրահանգումները ներկայացվել են հեղինակի հրատարակած գիտական հոդվածներում: Սեղմագիրն ամբողջությամբ արտացոլում է ատենախոսության բովանդակությունը:

Ատենախոսությունը համապատասխանում է պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու համար ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակը՝ Ալեքսանդր Խաչատրյանը, միանգամայն արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

ՀՀ ԳԱԱ ԱԻ Միջազգային հարաբերությունների
առաջատար գիտաշխատող, պ.գ.թ.
Աղավնի Ալեքսանդրի Հարությունյան
20.05.2021թ.

Հաստատում եմ

20.05.20[illegible]

ՀՀ ԳԱԱ Արևելագիտության
ինստիտուտի գիտքարտուղար,
պ.գ.թ. Ռ. Ա. [illegible]